Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Գայի անվան թիվ 21 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության (17 դասաժամ), ռուսաց լեզվի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
•Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
•Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
•Անձը հաստատող փաստաթուղթ,
•«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
•Ինքնակենսագրություն (Ձև 5),
•Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
•ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
•Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
•Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից 15-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթները տեղի կունենան սեպտեմբերի 27-ին՝ ժամը 12-ին, Վանաձորի Գայի անվան թիվ 21 հիմնական դպրոցում:
Հասցեն՝ ք. Վանաձոր, Նիզամի 49:
Տեղեկությունների համար զանգահարել (094) 14-85-86 հեռախոսահամարով: